Երևանում գործադրվող Մոսկվայի հանձնահայ քաղաքականությունը դատնում է Եւրախորհրդարանի քննարկման նյութ

Մայիսի սկզբներին Հայկական ժողովրդային շարժման պատվիրակությունը որպես դիտորդ ներկա գտնվեց Հունաստանի Կորֆու կղզում կայացած Եւրախորհրդարանի սոցիալիստ պատգամավորների խմբի խորհրդաժողովին եւ նրանց ներկայացրեց իր կողմից ստորագրված մի կոչ-դիմում:

Շարժման պատվիրակությունը խորհրդաժողովի շրջանակներում շփումներ հաստատեց Եւրոպական ընդհանուր շուկայի զանազան երկրների պատգամավորների հետ, նրանց բացատրելով Արցախյան ճգնաժամի վերջին իրադարձությունները եւ կենտրոնական իշխանության հակահայ դիտավորությունները:

Պատվիրակությունը հատուկ հանդիպում ունեցավ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության պատգամավորների հետ, որոնց հետ միասնաբար մշակվեց մի նախագիծ-բանաձեւ, ուր, նկարագրելով Արցախում եւ նրա հարակից հայաբնակ շրջաններում հայերի համար ստեղծված անտանելի վիճակը, ավերածությունները, ոստիկանի ու բռնի տեղահանությունը, որ հետեւանք է Մոսկվայի կողմնակալ քաղաքականության, ասվում է թե՝

«Եւրախորհրդարանը կոչ է անում նախագահ Գորբաչովին, ազերի եւ հայ իշխանություններին՝ անմիջապես վերջ տալ բռնության գործողություններին, դատապարտում է խորհրդային բանակի եւ «ազերի ուժերի» դավադիր հանձնայնությունը, որ մեկ անգամ չի գործադրվել Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ, եւ հրավիրում է խորհրդային, ազերի եւ հայ իշխանություններին Ղարաբաղի խնդրին քաղաքական լուծում տալ, հանձնայն մարդու իրավունքներին եւ ինքնորոշմանը, ինչը ունակ կլինի վերացնելու լարվածության պատճառները եւ Կովկասի այդ շրջանի առճակատման տեւական վտանգը»:

Այս բանաձեւը սոցիալիստական խումբը հանձն առավ ներկայացնել Եւրախորհրդարան: □